ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

9 դեկտեմբերի 2011թ. թիվ 609

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ
ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” ՆՀ-728 հրամանագրի 1.15 կետի “ժա” ենթակետով, համաձայն ՀՀ Լոռու մարզպետարանի և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Լոռու մարզային գործակալության համատեղ աշխատանքային ծրագրի, հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա.Գևորգյանի 05.12.2011թ. թիվ 01/15/7795-11 հանձնարարականը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Լոռու մարզի համայնքներում և բոլոր կարգի տնտեսություններում 2012թ. հունվարի 1-17-ը անցկացնել անասնագլխաքանակի համատարած հաշվառում:

2. Հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետում և պատշաճ մակարդակով իրականացնելու համար առաջարկել՝

1) Լոռու մարզի բոլոր համայնքների ղեկավարներին՝

ա. Մինչև ս/թ դեկտեմբերի 30-ը կազմել անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողովներ՝ դրանց կազմում ընդգրկելով նաև տվյալ համայնքը սպասարկող անասնաբույժին:

բ. Անասնագլխաքանակի հաշվառման արդյունքները մինչև 2012թ. հունվարի 20-ը ներկայացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Լոռու մարզային գործակալություն:

2) ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության Լոռու մարզային կենտրոնի անասնաբուժության բաժնի գլխավոր մասնագետ Կ.Մելիքյանին՝

Մարզի համայնքներում ՀՀ գյուղատնտեսության նախարարության Լոռու մարզային անասնաբուժական ծառայության անձնակազմի միջոցով վերահսկել անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ.Հակոբյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2011թ. դեկտեմբերի 9
ք.Վանաձոր